ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Ջրամատակարարում. արտաքին ցանցեր և կառուցվածքներ» ՀՀ շինարարական նորմերի մշակման (տեղայնացման) աշխատանքների կատարման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի ապրիլի 25-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/2 պայմանագրում 2018 թվականի մայիսի 11-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ ֆինանսների նախարարության 10.05.2018թ. N 03/26-1/8346-18 գրություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի 4.1.1 կետի երկրորդ պարբերությունը շարադրվել է նոր խմբագրությամբ:
Փոփոխության հիմնավորում	2018 թվականի ապրիլի 25-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/2 պայմանագրի 7.5 կետը:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

25.04.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/2 գնման պայմանագրի

ք. Երևան

11.05.2018թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Օհանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով «Ջրամատակարարում. արտաքին ցանցեր և կառուցվածքներ» ՀՀ շինարարական նորմերի մշակման (տեղայնացման) աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 25.04.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 4.1.1 կետի երկրորդ պարբերության մեջ <<Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով Պայմանագիրը կլուծվի>> բառերը փոխարինել <<Պայմանագիր կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով Պայմանագիրը կլուծվի>> բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու՝	Կ ա տ ա ր ո ղ՝
<<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ	<<Երևաննախագիծ>> ՓԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3	ք. Երևան, Բյուզանդի 1/3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	<<Պրոմեթեյ բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 900011019099, ՀԿՀՀ 02565827	Հ/Հ 1660000215670100
	ՀԿՀՀ 02500241

Աշխատակազմի ղեկավար՝

(ստորագրություն) Ա. Մկրտչյան

Կ.Տ.

Տնօրեն՝

(ստորագրություն) Ս. Օհանյան

Կ.Տ.